ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1951 *Общественные науки*

Ա. Միրզոյան

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Երևանի անվան ծագման հարցը՝ աղբյուրների պակասության պատճառով, մինչև այժմ մեր պատմագրության մեջ գիտականորեն մեկնաբանված չէ։

Սկսած 19-րդ դարից հայ պատմագրության մեջ փորձեր են կատարվել Երևանի անվան ծագումը բացատրելու։

Հայ հոգևոր պատմագրությունը փորձել է Երևանի անունը բացատրել հայկական «երև-վալ», «երևան գալ» բառերով, կապելով այն Նոյի՝ բիբլիական առասպելի հետ։

Ղ. Ինճիճյանն իր «Հնախոսութիւն Հայաստանեայց աշխարհի» աշխատության մեջ հիմք ընդունելով «Գիրք ծննդոց»-ը, գրում է. «Զի մինչև ցայժմ ցուցանեն զլեառն Մասիս ուր նստաւ տապանն Նոյի. ցուցանեն զտեղին և զկողմն երևելոյ զլխոց լերանց Երևան կոչեցեալ, զորմէ գրի ծննդոց ը. 5»։[1]

Ղ. Ինճիճյանի և մի շարք այլ հեղինակների նման կարծիքը, որ հիմված է Աստվածաշնչի առասպելաբանության վրա, հասկանալի է, որ գիտության հետ ոչ մի առնչություն չունի և մեր մի շարք բանասերների կողմից այն վաղուց է մերժված։[2]

Անհիմն է նաև այն ավանդությունը, որ իբր թե Երևանի անունը կապված է Շահ-Իսմայիլի խաներից մեկի՝ Ռևան-Ղուլի խանի անվան հետ։ Ըստ այդ ավանդության Ռեան-Ղուլի խանը Շահ-Իսմայիլի հրամանով Երևանի տեղում բերդ է կառուցել և իր անվամբ էլ կոչել է Ռևան, որից էլ առաջ է եկել Երևան անունը։[3] Պատմության մեջ հայտնի փաստ է, որ Շահ-Իսմայիլն իշխել է 16-րդ դարի 1-ին քառորդում (1502—1524), իսկ Երևանը, որպես նշանավոր ավան հայ պատմագրության մեջ հիշատակվում է 7-րդ դարից։[1]

Պետք է նշել, որ այդ ավանդությունը, որպես իրողություն ընդունել է նաև հայտնի արևելագետ ակադեմիկոս Վ. Բարտոլդը։ Նա հավանաբար լավ ծանոթ չլինելով 7-րդ դարի հայ պատմիչների վկայություններին, գրել է. Երևանը որպես գյուղ հիմնադրվել է Լենկ-թեմուրի ժամանակ, իսկ քաղաք է դարձել միայն 16-րդ դարում, Շահ-Իսմայիլի օրոք և այդ ժամանակ էլ ստացել է իր ներկա անունը։[2]

Ոմանք էլ (Մ. Զամչյան, Հակոբ Նայյան), կարծում են, որ Երևանի անունը կապված է մեր թվականությունից առաջ 3-րդ դարում Այրարատյան երկրում իշխող Երվանդյան դինաստիայից Օրոնտես-Երվանդ թագավորի անվան հետ, ենթադրելով, որ Երևանը դա Երվանդյանների իշխանության աթոռանիստ կենտրոն՝ Երվանդաշատն է, կամ էլ այդ թագավորի անունը կրող ուրիշ դաստակերտներից մեկը։[3] Այս ենթադրությունը ևս անհիմն է, քանի որ Մովսես Խորենացու վկայությունից միանգամայն պարզ է, որ Օրոնտես-Երվանդ թագավորը (մեր թվականությունից առաջ 3-րդ դարի վերջում կամ 2-րդ դարի սկզբում) Արմավիրից դեպի արևմուտք Արաքսի ափին, մոտավորապես Արաքսի և Ախուրյանի խառնարանումն է կառուցել իր նոր աթոռանիստ կենտրոնը՝ Երվանդաշատը, արքունիքը Արմավիրից տեղափոխելով այդտեղ։ «Սրա ժամանակ,—գրում է Խորենացին,—արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Երասխ գետը (նրանից) հեռացել էր, և ձմեռն երկարելիս։

---

[1] Ղ. Ինճիճյան, «Հնախոսութիւն Հայաստանեայց աշխարհի», հ. Ա., Վենետիկ, 1935, էջ 273—274։ «Գիրք Ծննդոց», Ը. 5։

[2] Степан Зелинский, „Город Эривань". Сборник материалов для описания местностей и племен Кавказа". Выпуск первый. Тифлис. 1884. стр. 1. Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 299։ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը», Երևան, 1931 թ., է 7։

[3] Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 300։

[1] «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151։ Սեբեոս, «Պատմութիւն», Երևան, 1939, էջ 118։

[2] В. Бартольд. „Историко-географический обзор Ирана", с. Петербург, 1903, стр. 150.

[3] Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 299։

երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորական կայանի համար խմելու բավական ջուր չէր ճարվում: Սրանից Երվանդը նեղվելով, մանավանդ՝ մի ավելի ամուր տեղ փնտրելով, արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը, միակտուր ապառաժ բլրի վրա, որը շուրջպատում է Օրասխը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը: (Երվանդը) բլուրը պարսպապատում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլուրի հատակը՝ գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսում են այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով:[1]

Ուրեմն ոչ մի հիմք չկա նաև պնդելու, որ Երևանը Օրոնտես-Երվանդ թագավորի անունը կրող Երվանդավանն է կամ էլ նրա անվամբ հորջորջվող դաստակերտներից որևէ մեկը:

Ռուս նշանավոր հնագետ Մ. Նիկոլսկին ևս սխալվում է, երբ ենթադրում է, որ Երևանի անունը կապվում է ուրարտական թագավոր Ռուսա 1-ինի (730–714 թթ. մ. թ. ա.) Սևանա լճի հարավային ափին գտնվող Քյոլան-Ղրան (Ծովինար) գյուղի մոտ թողած սեպագիր արձանագրության մեջ 23 նվաճված երկրների շարքում հիշատակված Երիաինի (Eriaini) երկրի անվան հետ:[2]

Ըստ Մ. Նիկոլսկու Երիաինին է կոչվել Արարատի ձախ ափի հովտի կենտրոնական շրջանը, այժմյան Երևանի հարթավայրը, իր անունն ստանալով Երի (eri) ցեղի անունից, որն ապրել է այդ երկրում: Նիկոլսկին կարծում է, որ Երիաինի երկրի կենտրոնը եղել է Երևանը, իր վրա կրելով ամբողջ երկրի անունը (Eriaini-Eriwan):[3]

Պրոֆեսոր Գր. Ղափանցյանը չնայած չի ժխտում և հավանական է համարում, որ Երևան (Erewan) անունը առաջացած լինի eri (a)+awan բառերից, որ կնշանակե «Երի-երկիր», «Երի-տեղ» և հետագայում հայկական բառակազմությամբ դարձած լինի Երևան (Erewan), բայց խիստ պրոբլեմատիկ է համարում, որ Երի, կամ Արի ցեղը (որի անունով էլ նրա ապրած երկիրը կոչվել է Երիաինի), բնակված լինի Երևանի շրջակայքում, քանի որ այդ մասին չկա ոչ մի փաստ, ընդհակառակը, փաստերը հաստատում են, որ Երի կամ Արի ցեղը ապրել է պատմական Շիրակ գավառում, այժմյան Լենինականի շրջակայքում:[1]

Եվ իրոք, մինչև այժմ հայտնաբերված հնագիտական նյութերը և լեզվաբանական նորագույն տվյալները չեն հաստատում Մ. Նիկոլսկու այդ ենթադրությունը:

Արինբերդում (Ղանլի-Թափայում) 1950 թ. ճարտարապետ Գ. Հովհաննիսյանի կողմից հայտնաբերված ուրարտական թագավոր Մենուայի որդի Արգիշտիի (8-րդ դար մ. թ. ա.) սեպագիր 13-տողանոց արձանագրության ընթերցումից պարզվեց, որ Արգիշտին Արինբերդում կառուցել է բերդ-քաղաք և այն կոչել է Իրբունի (irbuni):[2]

Արգիշտիի կողմից Իրբունի քաղաքի կառուցումը մինչև հիշյալ արձանագրությունն էլ հայտնի էր Վանում Արգիշտիի թողած սեպագիր արձանագրություններից, ուր Արգիշտին հաղորդում է Իրբունի քաղաքի կառուցման և այնտեղ 6600 գերիների տեղափոխման մասին, բայց Վանի այդ արձանագրության մեջ չէր հիշատակվում Իրբունի քաղաքի վայրը:

Իրբունի քաղաքը հիշատակվում է նաև Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված՝ Արգիշտիին պատկանող երեք վահանների սեպագիր արձանագրություններում (վահաններից մեկը հայտնաբերվել է 1950 թ., իսկ երկուսը 1951 թ.):[3]

1950–1951 թթ. Արինբերդում և Կարմիր բլուրում հայտնաբերված հետագա արձանա-

[1] Մովսես Խորենացի, «Հայոց Պատմություն», աշխարհաբար, Երևան, 1940, էջ 109: Տես նաև Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան, 1944, հ. Ա., էջ 127:

[2] Материалы по археологии Кавказа, т. V, стр. 97, 120—128.

[3] Там же, стр. 97—100.

[1] Капанцян Гр. „Историко-лингвистическое значение топонимики древней Армении", Научные труды Ереванского Гос. университета, т. 14, 1940, стр. 320—323.

[2] «Սովետական Հայաստան», 1950 թ., № 234, Коммунист, 1950, № 235: Մ. Իսրայելյան «Ուրարտական երկու նոր արձանագրություններ», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951 թ., № 8, էջ 89—99: Նույն տեղում К. Оганесян, „Арин-берт (Ганлы-тапа) урартская крепость города Ирпуни", стр. 75—88:

1879 թ. Արին-բերդի բլրի վրա առաջին անգամ հայտնաբերվել է Արգիշտիի 4 տողանոց սեպագիր արձանագրությունը, որը հաղորդում է այդ տեղում բերդի կամ աշտարակի կառուցման մասին:

[3] Կարմիր-բլուրից հայտնաբերված 3 վահաններն էլ այժմ գտնվում են Հայաստանի Պետական Պատմական թանգարանում:

դրությունների ընթերցումից հետո, երբ հայտնի դարձավ, որ Իրբունին կառուցվել է Երևանից ոչ հեռու (մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք Երևանի Նոր-Արեշ ավանի մոտ Արին-բերդում — (Ղանլի-Թափայում), միաժամանակ նկատի ունենալով Իրբունի և Երեան բառերի նմանությունը, մեր մի շարք հնագետներ, լեզվաբաններ և պատմաբաններ ենթադրեցին՝ արդյոք Երևան բառը չի կարելի սերված համարել Իրբունի անունից և Իրբունին համարել հնագույն Երևան:

Այդ մասին առաջին անգամ գրավոր ձևով իր ենթադրությունը հայտնեց ընկ. Մ. Իսրայելյանը: Նա գրում է. «Արդյոք հնարավոր չէ՞ Երևան անունը սերել ուրարտական irbuni (Erbuni)-ից հայտնի է, որ ուրարտական b հայերենում սովորաբար տալիս է w (վ), ինչպես Biaina> Վան, ebani> ավան, abili> ավել և այլն: Irbun(i) (Erbuni)'> Իրվունի> Էրվունի, որ հեշտությամբ կարող է դառնալ Երեան, մանավանդ, որ ուրարտական Իրբունի քաղաքը հենց կպած է Երևանին, իսկ հանրահայտ է, որ սովորաբար տեղանունները խիստ պահպանողական են»:[1]

Չնայած Մ. Նիկոլսկին Երևան անունը չփաստարկված կերպով էր աշխատում սերել Երիախնի անունից, բայց նա դեռևս 1879 թ. ճիշտ էր նկատում, որ հնագույն Երևանը ոչ թե եղել է այժմյան Երևանի տեղում, այլ այժմյան Երևանից մեկ կիլոմետր դեպի հյուսիս արևելք գտնվող Արին-բերդ (Ղանլի-Թափա) կոչվող բլրի վրա, որտեղ մինչև այժմ էլ պահպանված են ուրարտական շրջանի բերդի հետքերը:[2]

Պետք է հավանական համարել այն ենթադրությունը, որ Երևան անունը սերվել է Իրբունի անունից և Իրբունի քաղաքը հնագույն Երևանն է:[1] Նմանավանդ, որ Արին-բերդում և նրա շրջակայքում 1947—1951 թթ. կատարված հնագիտական հետախուզությունները ցույց տվին, որ Արին-բերդի շուրջ ստորոտներում տարածված քաղաքը բավականին մեծ տարածություն ունի, ներառյալ այժմյան Երևանի հարավ-արևելյան թաղամասերը:[3]

8-րդ դարի վերջում կամ 7-րդ դարի սկզբում (մ. թ. ա.) Արին-բերդի անկումից հետո ամենայն հավանականությամբ քաղաքն աստիճանաբար հեռացել է ավերված միջնաբերդից և տարածվել է դեպի հյուսիս-արևելք, այժմյան Երևանի տերիտորիան:

Սակայն այդ հավանական ենթադրությունը, որ Իրբունի քաղաքը հնագույն Երևանն է, անհրաժեշտ է հնագիտական և լեզվաբանական նոր փաստերով հանգամանորեն հիմնավորել, իսկ դրա համար անհրաժեշտ է շարունակել սիստեմատիկ պեղումները Արին-բերդում (Իրբունիում)[4], որն, անշուշտ, նոր կարևոր փաստեր կտա և մեր համապատասխան մասնագետների լուրջ ուշադրությունը հրավիրել այդ հետաքրքիր հարցի վրա՝ մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանի անունը գիտականորեն լուսաբանելու նպատակով:

---

1 Մ. Իսրայելյան, «Ուրարտական երկու նոր արձանագրություն», ՀՍՍՌ ԳԱ Հասարակագիտական բաժանմունքի «Տեղեկագիր», 1951, № 8, էջ 97:

2 Материалы по археологии Кавказа, т. V, стр. 97—100.

1 Թե ինչ իմաստ ունի Իրբունի բառը, մեր մասնագետները դեռևս չեն բացատրում նյութերի պակասության պատճառով: Այդ առթիվ Մ. Իսրայելյանը գրում է. «Քանի որ Արգիշտին բերդը կոչում է Իրբունի անունով, կարելի է ենթադրել, որ այդ բառը ուրարտական է և irbun(i) բառահիմքը որևէ իմաստ ունեցել է ուրարտերենում, թեև նյութերի սակավության պատճառով առայժմ դժվար է այն պարզել (Մ. Իսրայելյան «Ուրարտական երկու նոր արձանագրություն», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8, էջ 93):

2 К. Оганесян. „Арин-берт (Ганлы-тапа) урартская крепость города Ирпуни". стр. 75—88.

4 Արին-Բերդում սիստեմատիկ պեղումները սկսվել են այս տարի, 1951 թ. Հայկական ՍՍՌ Գ. ակադեմիայի թղթակից անդամ Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ: